

Քրիստոս Ծնավ և Հայտնեցավ, Ձեզ
և Մեզ Մեծ Ավետիս:

Դուք մեռած էիք յանցանքներու եւ
մեղքերու մէջ, բայց ինք ձեզ
ապրեցուց: Անոնց մէջ ժամանակին
կ'ընթանայիք՝ այս աշխարհի
ընթացքին համաձայն, օդի
իշխանութեան իշխանին համաձայն,
այն ոգիին՝ որ հիմա կը ներգործէ
անհնազանդութեան որդիներուն
մէջ: Անոնցմով մենք բոլորս ալ
ժամանակին կը վարուէինք՝ մեր
մարմինին ցանկութիւններով,
մարմինին ու միտքին փափաքները
գործադրելով. բնութեամբ
բարկութեան զաւակներ էինք՝
ուրիշներու նման: Բայց Աստուած՝
որ հարուստ է ողորմութեամբ, իր մեծ
սիրոյն համար՝ որով սիրեց մեզ, երբ
մեռած էինք մեղքերու մէջ՝ կեանք
տուաւ մեզի Քրիստոսի հետ, (դուք
շնորհքով փրկուած էք.) անոր հետ

յարուցանեց մեզ եւ անոր հետ
բազմեցուց մեզ երկնային վայրերու
մէջ՝ Քրիստոս Յիսուսով, որպէսզի
գալիք դարերուն մէջ ցոյց տայ իր
շնորհքին գերազանց ճոխութիւնը՝
Քրիստոս Յիսուսի միջոցով մեզի
հանդէպ ցոյց տուած քաղցրութեամբ:
Որովհետեւ դուք շնորհքով փրկուած
էք՝ հաւատքի միջոցով, եւ ատիկա ո՛չ
թէ ձեզմէ է՝ հապա Աստուծոյ ընծան
է. ո՛չ թէ գործերէն է, որպէսզի ո՛չ
մէկը պարծենայ: Քանի որ մենք
անոր ձեռակերտն ենք, Քրիստոս
Յիսուսով ստեղծուած՝ բարի
գործերու համար. Աստուած
նախապէս պատրաստեց զանոնք,
որպէսզի մենք ընթանանք անոնց
մէջ: Ուստի յիշեցէ՛ք թէ դուք
ժամանակին մարմինով
հեթանոսներ էիք, (որոնք անթլփատ
կը կոչուին անոնցմէ՝ որ թլփատուած
կը կոչուին, մարմինի մէջ՝ ձեռքով
եղած.) այդ ատեն դուք առանց

Քրիստոսի էիք, ուժացած ըլլալով
Իսրայէլի հասարակութենէն, եւ
օտարացած՝ խոստումին ուխտերէն.
ո՛չ յոյս ունէիք, ո՛չ ալ Աստուած՝
աշխարհի մէջ: Իսկ հիմա՝ Քրիստոս
Յիսուսով՝ դուք որ ժամանակին
հեռաւոր էիք, մերձաւոր եղաք
Քրիստոսի արիւնով: Որովհետեւ ա՛ն
է մեր խաղաղութիւնը. ինք երկուքը՝
մէկ ըրաւ, ու քակեց մէջտեղի
անջատող պատը, իր մարմինին մէջ
ոչնչացնելով իրարու միջեւ եղած
թշնամութիւնը, այսինքն՝
հրամաններով եղած
պատուիրաններուն Օրէնքը.
որպէսզի իրմով այդ երկուքէն
ստեղծէ նոր մարդ մը՝ այսպէս
խաղաղութիւն ընելով, ու երկուքն
ալ հաշտեցնէ Աստուծոյ հետ մէկ
մարմինի մէջ՝ խաչին միջոցով: Անով
սպաննեց թշնամութիւնը, եւ եկաւ
խաղաղութիւն աւետեց ձեզի՝ որ
հեռաւոր էիք, ու անոնց՝ որ

մերձաւոր էին: Քանի որ անոր միջոցով մենք բոլորս ալ արտօնութիւն ունինք մօտենալու Հօրը՝ մէկ Հոգիով: Ուրեմն հիմա դուք այլեւս օտարականներ ու պանդուխտներ չէք, հապա սուրբերուն քաղաքակիցները, եւ Աստուծոյ ընտանիքը, շինուած առաքեալներուն ու մարգարէներուն հիմին վրայ, որուն ծայրագոյն անկիւնաքարը՝ նոյնինքն Յիսուս Քրիստոս է: Անով ամբողջ շէնքը՝ յարմարութեամբ միասին կազմուած՝ կ'աճի, սուրբ տաճար մը ըլլալու Տէրոջմով. անով դո՛ւք ալ միասին կը շինուիք՝ Աստուծոյ բնակավայր ըլլալու Սուրբ Հոգիին միջոցով: